ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2020 թվականի N 47-Ա

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետով և 37-րդ հոդվածի դրույթներով ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» N384-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1.ՀՀ Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության կապի ծառայության պետ նշանակել Գալյա Կարապետյանին:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2008 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության տարահանման մարզային հանձնաժողովի կազմը և քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կառուցվածքը հաստատելու, ՀՀ Սյունիքի մարզպետի 2000 թվականի մարտի 21-ի N13-Ա և 2003 թվականի մայիսի 23-ի N24-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N51-Ա որոշման N1 հավելվածում «Վ. Վարդանյան - «Արմենթել» ՓԲԸ Սյունիքի տարածքային կենտրոնի պետ, կապի և ազդարարման ծառայության պետ» բառերը փոխարինել «Գ. Կարապետյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ, կապի ծառայության պետ» բառերով:

3.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Սյունիքի մարզպետի 2019 թվականի օգոստոսի 5-ի «ՀՀ Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության կապի ծառայության պետ նշանակելու և ՀՀ Սյունիքի մարզպետի 2008 թվականի մայիսի 15-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N78-Ա որոշումը:

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

2020թ. փետրվարի 12
ք. Կապան